ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

04 հոկտեմբերի 2023 թվականի № 291-Ա

ՆԱՐԵ ՍՏԵՓԱՆՅԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ «ՉԱՐԵՆՑԱՎԱՆԻ Ե. ՉԱՐԵՆՑԻ ԱՆՎԱՆ № 5 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԱՍԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂԻ ՊԱՇՏՈՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասի «ա» կետի, Աշխատանքային օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի մարտի 2-ի № 259-Ն որոշման հավելվածի 3-րդ կետը, *Ն. Ստեփանյանի* 2023 թվականի հոկտեմբերի 3-ի № 25-13 դիմումը և *Ա. Գալստյանի* 2023 թվականի հոկտեմբերի 4-ի դիմումը՝ **որոշում եմ.**

1. ***Նարե Շիրազի Ստեփանյանին*** 2023 թվականի հոկտեմբերի 4-ից ազատել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի «Չարենցավանի Ե. Չարենցի անվան № 5 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության վարչատնտեսական մասի համակարգողի պաշտոնից՝ լուծելով նրա հետ 2023 թվականի ապրիլի 6-ին կնքված № 1 աշխատանքային պայմանագիրը:

2. Մինչև վարչատնտեսական մասի համակարգողի նշանակվելը՝ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի «Չարենցավանի Ե. Չարենցի անվան № 5 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության վարչատնտեսական մասի համակարգողի պաշտոնակատար (պարտականությունները կատարող) նշանակել ***Անահիտ Վազգենի Գալստյանին:***

3. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչությանը՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կազմակերպել և անցկացնել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի «Չարենցավանի Ե. Չարենցի անվան № 5 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության վարչատնտեսական մասի հանձնման-ընդունման աշխատանքները և կազմել համապատասխան արձանագրություն:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ **Ա. ՍԱՀԱԿՅԱՆ**

2023 թվականի հոկտեմբերի 04
ք. Հրազդան